

2814

9(47.925)

P-79

~~2009~~
1936

✓ 250

9(47.925)

10-79

369

~~1930~~

1004
16934
9

ՀԱՅՔ Ի ՀՆԴԻԿՍ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ԵՒ ՀՈԼԱՆՏԱՑԻՈՑ



2004

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն

Ներկու ինչ յորդոր եղև ինձ յեղուլ զան-
ցըս Հայոց մասին Հնդկաց Անգլիացւոց 'ի
մեր լեզու. մի՛ զի պատիւ արարից պատ-
մագրին, որ խառնէ 'ի նկարագիր կեր-
պարանաց պանդխտութեան մերոյ զվառ
'ի վառ երանգս ազգասիրութեան. և միւս
ևս՝ զի առ 'ի չգոյէ յիշատակարանաց ան-
ցից մերոց 'ի Հնդկիս, մարթիցի սովին հա-
մառօտ տառիւ ընուլ ազգիս զպէտօնոցին:
Խցիւ բերէր սա զանուն արգոյ պատմա-
գրին և զգրոցն զթուական. զի երկոքին
ոսկ չեն 'ի միջի: Այլ յակնարկութեանց
անտի ելանէ զեղջեան թուական 1871. յո-
րում գրեցան 'ի հայկազնէ անգլիերէն 'ի
վերծանութիւն Անգլիացւոց թէ արդեօք
և ոմանց 'ի Հայոց Հնդկաց, որ ոչ ևս լսեն
զբարբառ հայրենեաց. զի են են իսկ այն-
պիսիք:

Ի գաղթականս ազգաց համակրօնից՝
հզօրն զանդօրն կլանէ, եթէ կենդանի խօ-
սիցն խտիրք ոչ կրճիմն 'ի միջի արձանա-
ցին: Իբր ոչ եթէ այլաձեւէ ազգախառնու-
թիւն զՀայն 'ի Յոյն կամ զՅոյն 'ի Հրեայ,
զի անյեղլի են համագոյիցս բունք և բերք,
այլ ստեղծանէ, զի միասացից թէ եղծանէ,
ժողովուրդ ինչ կիսամասնեայ և օտարա-
խորթ. որում 'ի տարափոխիկ յաջողուա-
ծոց չիք 'ի կարկատուն ազգաբանութեան
անդ մասն ինչ նախանձելի, մինչև զիշեր
ժամանակաց ծածկեսցէ զնա համայն: Եւ
ապա զի՛նչ . . . :

Հայքս առ հարկի անխխանութեան մե-
րոյ և բռնաւորութեան օտար իշխանաց՝
պանդխտեալ յոլորտս երկրի, յարդիւնս
ածեմք դարձեալ առհարկի զիմաստ առա-
ծին. Ուր ինձ բարիք, անդ հայրենիք: Սա-
կայն առինչ իցէ 'ի խորթ անդ հայրենիս
ապախտ առնել և զբարբառն հարազատ.
Հիմ ամուսինք մեր այլազինք մկրտեսցեն
զմեզ յիւրեանց լեզուս, և ոչ մեք զնոսա
'ի մերս, թէ չիցէ յիւրն կալ իւրաքտնչիւր:
Եթէ ոչ խղճեմք 'ի խնամութենէ բարգա-
ւաճ գրացեաց համակրօնից, և անդէպ

համարիմք խղճել՝ ուր եկեղեցիք այլաբե-
զութ՝ նովին անճառահրաշ պատգամաւ
զնոյն Քրիստոս քարոզեն, եթէ 'ի պիտո-
յից, ասեմ, գամք 'ի կենակցութիւն նոցա,
և 'ի կենակցութենէ յազգակցութիւն, որ
կարիք, որ սպառնալիք, թէ մանաւանդ
որ ցնորք կռիւիցին զմեզ անժառանգել զա-
ւանդս հարց և սերմանել անձանց արհա-
մարհանս: Անազգի է որ անգիտանայն զազգ
իւր և զլեզու: Միթէ հայն փառունակ չիցէ
յաւէժ զուգափառաց հանուրց համապա-
պատիւ. և կամ անփառունակն իսկ՝ գե-
րագոյն քան զանազգին հրաշափառ: Եւ ո-
րով փաստիւ օճան առնուցուն, որք այլ-
ազգն խորհիցին: Ուսանել ուսցուք զազ-
գի ազգի լեզուս, որ ըստ բարեձև դաս-
տիարակութեան դարուս՝ 'ի պարտուց հա-
մարի իցեն, այլ գէթ 'ի պատիւ բարոյակա-
նին մի զմերն անգիտացուք:

Այլ անհոգութիւն՝ յաճախէ, աւաղ,
զողբերգութիւնս 'ի պատմութեան մարդ-
կան. և ահա մեզ Հայք՝ 'ի Հնդկիս Բրիտա-
նաց յաւելուն օրինակ: Եւ բնդ Հայս 'ի
Հնդկիս Ներդաշնաց զի՛նչ լինիցի. . . :
Տաց 'ի վերջ թարգմանութեանս զգուզ-
նաքեայ ծրագիր բնակութեանս նոցա անդր,
որով սպաս հարկանիցի հարցասիրութեան
հեռաստանեայց: Այլ ո՛ տայր հանճարեղ
հայրենասիրաց մերոց 'ի կրկին իսկ 'ի Հըն-
դիկս փորձել մանաւանդ անագան քան
բնաւ իսկ ոչ, և նորոգել զնախանձ ազգա-
սիրութեան և զիմացութիւն օգտի նորին
'ի մերումս տարաշխարհիկ օտարութեան:
Այս լիցի նոցա 'ի փառս և մեզ 'ի լրումն
մաղթանաց:

Պ. ԽԱՉԻԿ. Ա. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Ի Սամարանդ

Ի Ճաւա

31 Դեկտեմբերի 1879

ՀԱՅԻՔ Ի ՀՆԴԻԿՍ ՀՈԼԱՆՏԱՑԻՈՅ

Անյայտ է՝ի պատմական յիշատակաց թէ երբ ստուգիւ մուտ գտին ՚ի Հընդիկս Հայք: Ըստ պատմութեան Հայոց յամաց իբր երկուց հազարաց հետէ ոչ դադարեաց երթեակ ընդ աշխարհս իւրեանց և Աղուանից: Սակայն ոչ սակաւք ՚ի Հայոց բնականային մերձ յարքունիս Մոնղոլաց անդ ուրեմն ՚ի վեշտասան դարուն. այն ինչ իշխէր Հընդիկաց մեծն Արքար, և չև տեառն թովմայ Հոփեան բանադնաց լեալ յամի 1615 յարքունիս Դեհհայ հրամանաւ առաջնոյ Յակովբայ արքայի Անգլիացոց, թէպէտ անգիտանամ թէ յանգլիացի պատմաբանից ակնարկեալ իցէ ուրեք ՚ի հաւաստիս յայս արձանադրաց, զոր ցարդ իսկ ընթեռնուլ է յամանս ՚ի չիւրմաց Հայոց ամբողջութեամբ յառաջ ևս քան զգարս երիս՝ ՚ի վաղեմի ուրեք գերեզմանատան յԱդրաքաղաքի: Եթէ ՚ի Հայաստանէ ընդ երկիրն Աղուանից գաղթեալ էր նոցա ՚ի Հընդիկս, կամ թէ նախ ընդ ծոց Պարսից անցեալ յարեմոտեան Հնդիկս, երթեալ էր ապա անտի յարքունիս մեծացն Մոնղոլաց, հրապուրեալ ՚ի համբաւոյ մեծաշուք պայծառութեան նորին, զայն ասել ոչ ունիմք: Է սոյոց զի չև միտեալ Անգլիացոց ՚ի վաճառակցութիւն Հընդիկաց, բնակէին Հայք ՚ի կողմանս կողմանս աշխարհին, պարապեալք խաղաղաւէտ ՚ի պաճարանս վաճառաչահութեան, և պատասպարեալք հրովարտակար մոնղոլ ինքնակալաց: Յաճախեալ էր բնակութիւնս նոցա ՚ի Սուրատ յերբեմն շահաւէտ քաղաքի Հնդկաց, ՚ի Մադրաս, ՚ի Կալկադա, ՚ի Չիլքա առ Հոգլի գետով, ՚ի Սէդաբադ մօտ ՚ի Մուրշիդաբադ և ՚ի Դաքա, և ամենայն ուրեք թուի յաջողեալ նոցա, և միտեալ զմեծութիւնս ընչից: Չնախկին ակնարկութիւն ՚ի հաղորդութիւն Հայոց ընդ Բնկերութեան Արեւելեան Հընդիկաց, այս է ընդ ազգի Անգլիացոց, գտանեմ յերրորդում հատորի Տեսութեան Դնդիկային իրաց անուն մատենին. զոր յամի 1782 ՚ի լոյս եհան Բալսէտ ՚ի Լոնդոն: Յամի 1668 ՚ի 22 աւուր ամենան յունիսի թուի երեալ հրովարտակ, և կամ զի տպաւորագոյն ասացից, ուխտ կռեալ ընդ Նախարար և Բնկերութիւն վաճառականաց Լոնդոնայ, որ շահակիցք էին արեւելեան Հընդիկաց, և ընդ Հայս ՚ի ձեռն երեսփոխանի նոցա խաջէ փանուս ֆալանթար անուն ուրումն ակնաւոր վաճառական յորջորջելոյ: Ըստ պայմանաց ուխտիս ներեալ էր Հայոց ըստ կամի բնակել և առնել շահավաճառ ՚ի Հնդիկս, և վայելել իսկ ՚ի նախամասնութիւնս չնորհեալս Անգլիացոց: Աւստի առաջին և կարեւորագոյն պրակ նշանաւոր հրովարտակին:

« Նախարար և Բնկերութիւն վաճառականաց Լոնդոնայ, որ շահակիցք են արեւելեան Հնդկաց, առ ամենեւին, որոց գիրս այս հասցէ, ողջոյն:

Եւ զի ազգ եղև մեզ ՚ի ձեռն փոխանակի նախարարիս Յեսուայ Կիլդեան իշխանագին թէ յետ յերկար խորհրդակցութեան ընդ խաջէ փանուս ֆալանթար անուն հայ ակնաւոր վաճառականի, բնակելոյ յիսպահան քաղաքի Պարսից, ևս և ընդ Յովհաննու Կարդեան ասպետի Լոնդոնայ, առաջարկեցաւ նմա ՚ի նոցանէ բազում ինչ յաղագս Հայոց ՚ի ձգել զվաճառ նոցա ըստ մեծի մասին ՚ի Հնդիկս և ՚ի Պարսս, և անտի յերկրէս Անգլիացոց՝ յեւրոպա, որ յաւելուլ յաւելուցու ըզմուտս մաքսից տեառն արքայի, և ըզնաւարկութիւն ազգիս, եթէ ընկալցին Հայք յԲնկերութեանս օճանս և խրախուսանս ՚ի շրջել զնախնի անցս վաճառաց իւրեանց յեւրոպա: Եւ մեք յար յօժար ՚ի յորդել և ՚ի յորդորել

զել և զմուտ վաճառուց և նաւուց հասարակաց այս պետութեան, կշռեալ քաջ զամենայն առաջարկութիւնս խընդորոյն, արժանել և սահմանել օրինակ զայս:

Նախ. — Զի լիցին Հայոց այժմ և յաւելտ հաւասար բաժին և օգուտ ամենայն նպաստից, զոր մատոյց Բնկերութիւնս այս, և կամ մատուցէ յայսմ հետէ որում և է ումեք յԱնգլիացոց, որ ՚ի խնդիր շրջիցին բախտի, կամ ՚ի տուրեառ վաճառաց:

Երկրորդ. — Զի լիցին նոցա հանապազ յայսմ հետէ լի ազատութիւն դարձադարձ առնելոյ ՚ի Հնդիկս նաւուք Բնկերութեանս, դրամեալ զնոյն ծախս նաւուց որպէս ամենայն ազատորեալ:

Երրորդ. — Զի ներեալ է նոցա բընակել յամենայն քաղաքս, ՚ի գաւառս և ՚ի պահակապանս Բնկերութեանս ՚ի Հնդիկս. զնել և վաճառել զտունս և զվիճակս երկրի. երանել յամենայն բարձս և յաւազութիւնս արքունի ըստ օրինի բնիկ Անգլիացոց, և հանապազ պաշտել համարձակ զկրօնս իւրեանց: Եւ մեք ազգ առնեմք յայսմ տուր զի ոչ կալցուք ՚ի սպասու մերում նախարար զգը, որ խովիցէ իւրք և կամ խորիցէ ինչ ՚ի բնակից նախամասնութեանց զոր սովաւ մատուցանեմք նոցա. այլ և մի հարցեն հարկս նոքա այլազգ և կամ առաւել քան զըուն Անգլիացիս:

Չորրորդ. — Զի լիցին նոցա նաւել ամենայն ուրեք ՚ի Հնդիկս, ՚ի ծովս հարաւոյ, ՚ի ճենս և ՚ի Մանիլայս ամենայն նաւուք. և վաճառաչահիկ լինել ՚ի բոլոր սահմանս Բնկերութեանս ըստ պայմանաց, մաքսից և ծախուց նաւուց հանգոյն անգլիացոց ազատի:

Յայսմ հրովարտակի ձեռնագիր արկին Բենիամին նախարար, Յեսու փոխանակ նախարարի և այլ զրանիկք երեք: Զոյգ ընդ սմին տուաւ միւս այլ հրովարտակ, որով ոչ միայն պատասպա

րէր պետութիւն երկրին « զհամարձակ պաշտօն կրօնից Հայոց », այլ և հաւանէր « հանել նոցա զվիճակ գետնոյ ՚ի կառոյցս եկեղեցւոյ ՚ի սպաս Բարձրելոյն ըստ նոցին տարազու, անդէն ընդ կալ նոցա ուրեք քառասուն կամ աւելի թուով ՚ի պահակապանս, ՚ի նահանգս և ՚ի քաղաքս Բնկերութեան արեւելեան Հնդկաց »:

Ըստ զօրութեան այսց հրովարտակաց, որ հաւանեալ եմ թէ չեղեն յերկրայս երբեք, և կամ ոչ եղծան ինչ ուրեք, կալան հանապազ Հայք լիով զիրաւունս իւրեանց ՚ի վայելս նախամասնութեանց հանգիտապատիւ Անգլիացոց ՚ի Հնդիկս: — Ոչ ևս խօսք լինին ապա ուրեք զհաղորդութենէ Հայոց ընդ Բնկերութեանս մինչև յամի 1715, յորում, ասէ Բալսէտ, ՚ի Հատորն առաջին, յէջ 61. « Հասու լեալ Բնկերութեանս կասկածաւոր կայից կալուածոց իւրոց ՚ի Բենգալ և այլուր, արձակեաց յարքունիս Դեհհայ պատուիրակս երեւիս, զոմն Յովհաննէս Սուրնամ անգլիացի, և զմիւս ոմն Խաջէ Սերհանգ վաճառական հայ մեծահաշակ, խնդրել զփոխարէնս քնասուց անցելոց, զառհաւատչեալ ընդգէմ զրկանաց հանդերձելոց, զնախնի նախամասնութեանց ընդարձակութիւն և զյուրվից ևս նորոց յաւելուած, և մանաւանդ զդոյզն ինչ երկիր, ուր և կամիցի Բնկերութիւնս կառուցանել իւր գործարան »:

Այսպիսի բարբառ ցածուն էր Անգլիացոց քառասուն եկթ ամաւ յառաջ քան զպատերազմ Պլասեայ, որոյ յաղթութիւն ամենատեալս արար զնոսս ՚ի Բենգալ: Յարգիւնս եկն պատգամն բովանդակ ըստ նմին պատմագրի, զի ասէ. « Սովին պատգամաւորութեամբ ընկալան Անգլիացիք զհրովարտակն մեծ, որ ապահարկեացն զվաճառս նոցա յինքնակալութեան Մոնղոլաց՝ մուհակաւ իւր վճարելոյ ամի ամի զրիւր մի հօսուի գրամաւ կշռոյ »:

Նախամեծար լինել ուրուք ՚ի Հայոց

1 Freeman. Այսպէս գգուեն զանձինս Անգլիացիք:

քան զմեծատունն ոմն հնդիկ 'ի գնալ ընդ Սուրնամայ յարքունիս Դելհիայ, յայտ իմն առնէ զի Հայք առ փարթաւութեան և փառաց մեծազօրք էին յայնժամ 'ի Բենգալ, և մեծարոյ Անգլիացւոց և Հնդկաց առ հասարակ: Միաձայնի յայս և Բալսէտ 'ի պատմաբանել իւրումայսպէս. «Հայք՝ որ միշտն վաճառականք անուանիք եղէն 'ի Հնդկիս, կալան ընդերկար բազում բնակութիւնս 'ի Բենգալ, ևս առաւել 'ի Սէգաբատ: Յակաստանի կայր շահաւաճառ նոցա հրովարտակաւ Մոնգոլաց, որով սահմանէր և սակ երկուց նշանաւոր աղխամաղխից 'ի վաճառաց նոցա, իմա կտաւոյ և ապրիլմի, երեք և կէս առ հարիւր:

Յետ հրովարտակի մեծացն Մոնգոլաց, զորմէ բանք եղեն, Անգլիացիք, Հայք և այլ ազինք զոյգ զբաղէին 'ի Բենգալ զամս բազումս 'ի բազմաշահութիւն վաճառաց և նախանձընդդէմ ջանից, ոչ իւրք բարեկամութեան նոցա աղմկեալ, մինչև յամի 1756 բնաւ իսկ կերպարանափոխ եղեն իրք 'ի դիպաց, և հիմն արկաւ բրիտանիկ պետութեան 'ի Հնդկիս:

Սուրաշա Դոմլա պատանի դեռ այն ինչ քսանամեայ, պայտալատեալ զհաւ իւր Ալիվէրդի խան, որ իբրև կուսակալ Մոնգոլաց իշխեալ էր 'ի Բենգալ, 'ի Բենհար և յՈւրիսա, յարոյց պատերազմ ընդ զէմ Անգլիացւոց և չուարարեալ ստուար բանակաւ 'ի կալկաթա, յարձակեցաւ յամրոց անգր, ուր ապաստանեալն էր նոցա, և էառ զայն յետ տփար դիմաւ մարտի: Ոմանք 'ի պարտելոյ անտի փախեան 'ի նաւս որ կային 'ի գետի անդ, որոց վարեալ ընդ ալիս, խաղացին 'ի խորս, այլք անկան 'ի ձեռս յաղթականին: Եւ յայտ իսկ է սոսկալի օրհաս յողունց 'ի կալանաւորաց անտի ողբերգեալ 'ի խաւարին խոռոչին 'ի կալկաթա: Իսկ որ 'ի նաւան ապաստան եղեն, իջին և թաքեան ուրեք 'ի փոլթա իբր քառասուն փարսախաւ հեռի 'ի կալկաթայ: Հարկ եղև նոցա առ 'ի չղոյէ պարենի տանել զժնդակաց, այլ

յօգնութիւն եհաս նոցա մարդասէր և բարեխնամ ոմն վաճառական հայ Պետրոս Յարութիւնեան. յղեալ երբեք երբեք զանխուլ 'ի պէտս նոցա մակոյկս նպարակաւորս: Այս Պետրոս Յարութիւնեան բնիկ Պարսից, նոյն ինքն է, զոր Որմէս 'ի պատմութեան Հնդկաց «Հայն Պետրոս» կոչէ, և առեալ, ասէ, ապա յԱնգլիացւոց առ ֆլիւէ իշխանաւ 'ի պաշտօնեայ հաւատարիմ խօսել ընդ Միհրջափարայ և Ուիչոնդայ 'ի հնարս արկանելոյ իշխանութենէ զՍուրաշա Դոմլա, որ անկան իսկ 'ի պատուոյն 'ի մարտին Պաւսայ: Պետրոսի էր եղբայր Գրիգոր ոմն, ծանուցեալ 'ի պատմութեան Հնդկաց Գորգին խան արևելեան յորջորջանօք, այր նշանաւոր անկակից հանճարով, որ 'ի վէպս ամացն այնոցիկ եբեր դէմս ոչ ինչ անաւագ, և մարթէր և ևս պայծառանալ նմա առ յաղթութեամբ Անգլիացւոց 'ի Բենգալ, եթէ սուսեր դաւաճանի ուրուք 'ի բնիկ զօրաց նորա չէր տարաժամ զբաւ արարեալ գերապանծ նահատակութեանց նորին:

Գրիգոր Յարութիւնեան, ծանօթագոյն 'ի Հնդկիս Գորգին խան անուամբ, վաճառական էր և բնակեալ զամս բազումս յարքունիս Սուրաշիգաբայ ընդ յորվս 'ի գաւառակցաց իւրոց, որ յարեցան ապա 'ի զօրս անգր, զոր յարոյց և մարզեաց Միհրջափարայ, ընդ որում արարեալն էր բարեկամութիւն սերտ: Ի Միհրջափարայ, որ յաջորդեալն էր Սուրաշայ, հանին Անգլիացիք առ ստգիւտ անբաւականութեան նորա գիշխանութիւն յամի 1760, և եղին ընդ նորա զհօր նորին զՄիհրջափարայ 'ի Բենգալ. փոխանակ զի եթող սա 'ի նոսա նահանգս երիս, զՄիհրջափարայ, զՉիտագոնդ և զԲրգոլան: Միհրջափարայ կացոյց իւր նոյնհետայն զԳորգին խան զրանիկ բարձերէց և հրամանատար ամենայն զօրաց: Թէ զիարդ ելից սպարապետս այս զպարտս բազմաթախանձ աւագութեան իւրոյ, թողից Մարչմանայ ասել: Մարչման, զոր ոչինչ վարանիմ առ հմտագոյնս ունել անցից Հրն.

զկաց, յառաջնում պրակի պատմութեան իւրոյ զխնամոտ յանձանձանաց Միհրջափարայ գրեալ, ասէ. —

«Միհրջափարայ բուռն եհար ուժգին 'ի տաժանաւոր պարտս տեսչութեան: Կարճեալ զբազմաթախութիւն կարգացն արքունեաց՝ եբարձ զօրէնս և զընդվայր ծախս բուժանելոյ զարքունի երէս: Խնդրեաց մանրախուզիւ զհամարս հասարակաց, հարկեցուցեալ զաւագանին զգայուել զոր ինչ մոզգայլեալն էր նոցա: Ճշգրեալ զվճար հասից, և ուղղեալ զբեկարս արքունի, յաւել 'ի մուտս գանձու գաւառացն երից՝ բիւրս բիւրուց հուսկեաց: Այս հայթայթանք յաջորդեցին նմա վճարել համայն զոր պատշաւ պարտէր Անգլիացւոց. և ապա դառնայր ամփոփէր զուշ և զուրուշ 'ի խորհուրդ մեծ, 'ի թափել զանձն 'ի լծոյ նոցա, և 'ի դարձուցանել յազգ իւր զազատութիւն: Փոխեաց զգահ իւր 'ի Մոնգիա, 320 փառսախաւ 'ի բացեայ 'ի կալկաթայ, ուր անտես ամենեկն այնու եռանդեամբ ետ զանձն 'ի հանդերձանս հնարից ինքնօրէն աղիկամութեան, մինչ զի 'ի նուազ ժամանակի քան զամս երիս՝ բաւականանայր ձայն տալ զօրութեան նոցին: Բարեացապարտ այսր արագ յեղափոխութեան սատար եղև բազմաջան հայ ոմն ծնեալ յիսպահան, և Գորգին խան յորջորջեալ 'ի Հնդկիս: Էր նա յառաջագոյն վաճառաւոր կտաւոյ առ Հուզի գետով. այլ իբրև յանձն եղև նմա հոգ պաշտաման, 'ի վեր երևեցաւ հանճար նորա ընդաբոյս և ճարտարութիւն ամենահնար: Ի նուազ աւուրս քան զամս երիս կազմեաց նո հեծելազօր 15,000, և 25,000 հետեակազօր, հրահանգեալս ըստ օրինի Անգլիացւոց. կառոյց դարբնոց 'ի ձոյլ մեծամեծ հրետից. հրաղէնս կռեաց անգլիակա նացն գերազոյնս, և մարզեաց զզօրականն հրազինաձիգ այնպէս՝ մինչև մարթել պանծալ նոցա և 'ի վաշտս իսկ Անգլիացւոց: Ոչ կարօտէր իմիք Միհրջափարայ 'ի հզօրագոյն գող քան զԱլիվէրդի խան, բայց անխուով պարապոյ սուղ ինչ ևս ամաց »:

Ի վերջանելուրուք 'ի Հայոց զներբող այսքանոյ բազմահմուտ մատենագրի, արժան է նմա պարծել ընդ մարթել անգրագիտի ումիք 'ի գաւառակցաց իւրոց, զի անգէտ էր գրոց Գորգին խան և ըստ Մարչմանայ երբեմն տրուպ վաճառական կտաւոյ, կորովութեամբ լոկով բնածին հանճարոյն՝ գումարել և կազմել զօրութիւն յաղթ և մարզիկ, յօրինել ձուլարան հրետից, հրաղէնս զօրծել աղնուագոյնս քան զԱնգլիացւոցն այնր ժամանակի, և յաստուջ կացուցանել զյանձանձանս իրաց մեծի գաւառի. և այս ամենայն 'ի սուղ շրջանի երից և եթ ամաց: Թէ որչափ ինչ տակաւին մնայր առնս մեծի 'ի վճարել եթէ երկայնէր արև նորա յարգուն, դիւրին է 'ի միտ առնուլ. այլ չէր այսմ ինչ: Ի յեղյեղուկ անտի գնացից ատենին խորհրդոյ Անգլիացւոց, որ գահալիժեացն 'ի վերջոյ զՄիհրջափարայ, հեռ յուզեալ 'ի նոսա մըղեցան երկուստեք բազում պատերազմունք, յորոց զյետնոյն որ հարաւ յամի 1763 յ2 օգոստոսի 'ի Գերիա, ասէ դարձեալ Մարչման. «Յերկարեաց մարտն ժամս չորս. և ըստ ֆլաւեայ, ոչ քաջագոյն երբէք մարտեան զօրք քան զՄիհրջափարայ: Ապաքէն 'ի ճակատու ուրեք մարտին միջամուխ եղեն 'ի գունդս Անգլիացւոց, և կալան 'ի նոցանէ հրետս երկուս. և յաղթութեան իսկ թուէր հակել 'ի նոսա, այլ անդրդուելի պնդութիւն սպայից Անգլիացւոց տապալեալ զամենայն դիմակալութիւն, բռնադատեաց զթշնամին լքանել ըզհրաղէնս իւր և զհամբարս, և նահանջել յՈւզուանուլ »:

Եթե նեկաւ յետոյ քան զճակատամարտն Գերիայ, մինչդեռ չըլէր զբանակաւն Գորգին խան անպահապան, յարձակեալ 'ի նա ուրուք 'ի բնիկ զօրաց, և եհար զնա կարեւրէր: Ածաւ սպարապետն խոյ 'ի խորան իւր, ուր յետ սակաւ ժամանակի աւանդեաց զօգի: Սա առաջին եղև 'ի Հայս Հնդկաց որ ետ զանձն յարուեստ վինուց. և մեծափառ պայծառացաւ զինուորական հանճա.

րով և ճարտարութեամբ յանձանձա-
նաց :

Յարդի պատմութեան ընդ առաջ
լինի միւս ոմն 'ի Հայոց , որ եմուտ 'ի
զինուորութիւն Մահարաջայ իշխանին
Գուալերայ : Հանգոյն յոգունց էջ 'ի
Հնդիկս և զօրավարն Յակովբ Պետրո-
սեան անինչ 'ի խնդիր բախտի . և մուտ
արարեալ 'ի պետութիւն հնդիկ իշխա-
նին , ընկալաւ անդ զկարգ զինուորա-
կան , և պարտուցն հաւատարիմ լրու-
թեամբ ել տակաւ մինչև 'ի զօրավարու-
թիւն : Չինուորէին ընդ նովաւ և այլք
բազումք 'ի Հայոց 'ի նշանաւոր կարգս
զօրականին : Պատերազմունք Մահարաջ
պուրայ և Պունեայ միեալք յամի 1843
առ նախարարութեամբ էլենբուրայ
ընդ Անգլիացիս և ընդ Հնդիկս , դիրե-
տար արարին 'ի սպառ զգօրս Մահա-
րաջայ : Հայոց 'ի Գուալեր կապտեալ
ի զործոյ իւրեանց , հարկ լինէր եր-
թալ խնդրել զապրուստ այլուր 'ի Հնդի-
կըս , թէպէտ և ոչ իբր զօրական : Իսկ
զօրավարն Յակովբ վաղ յետոյ վճարէր
'ի կենաց անցեալ զաւուրք , թողեալ
կին և ուստերս երկուս , յորոց մին յետ
սակաւու գնայր զհետ հօրն 'ի հանգիստ .
և միւսն գնդապետ Յովհան Յակովբեան
խողխողեցաւ յԱգրա 'ի դաւակցաց ա-
պրտամբութեանն յուղելոյ յամի 1857 :

Ձիզլ է յոյժ զի որ 'ի յետին դարս եր-
կուս եկին և բնակեցան Հայք այլ և
այլ ուրեք 'ի Հնդիկս , ոչ թողին յի-
շատակարանս զվաստակոյ իւրեանց ,
զտարազուց վաճառաց և զհաղորդու-
թեան ընդ հնդիկ իշխանայս և ընդ
Եւրոպացիս , որ պարագայց ամբ
ողորէին զլել զիրերօք : Սորին աղա-
գաւ անկ է յենուլ յաճախ յաւանդու-
թիւնս հասեալս յազգաց առ մեղ , թէ
զոր գէմս բերին նախնիք մեր յառաջ
և յետոյ քան զտակաւ նուաճել Անգ-
լիացւոց զՀնդիկս , և զինքնակալել նո-
ցա անդանօր իսպառ :

Բռնադատեալ Հայոց 'ի բռնութենէ և
'ի հարստահարութենէ տաճիկ և պար-
սիկ իշխողաց իւրեանց , մեկնեցան
տարազէմ 'ի հայրենեացն 'ի Հնդիկս .

յորովագունից 'ի նոցանէ զորով անինչ ,
անբարեկամ , անծանօթ և առանց ըն-
ծայութեան : Պարտ էր նոցա բանալ
անդ իւրեանց անցա ընդ անձկութիւնս
և ընդ սրտաբեկութիւնս . բայց 'ի կորու-
վոյ բնաբոյս ճարտարութեան իւրեանց
և մեծի աշողակութեան 'ի շահավա-
ճառ , յորում աշխարհաքարոզ բարե-
բանին , ոչ միայն գտին 'ի տար աշ-
խարհին զլուռն ոտից , այլ թէ և փո-
քրաթիւ իսկ էին , պատկառելի և մե-
ծարոյ եղեն Եւրոպացւոց և Հնդկաց
միանգամայն : Թուի բնակութիւն կա-
լեալ նոցա նախ 'ի Սուրատ , որ 'ի Հըն-
դիկս արևմտից , և 'ի Սէդաբադ ' որ 'ի
Բենգալ , և շահավաճառութեան նոցա
ծաղկեալ անդ յոյժ . այլ 'ի սահել ա-
մաց , չընեցան երկաքանչիւր քաղա-
քացն իբր . և յանկանել վաճառակա-
նութեան նոցա և ժրութեան , պակա-
սեցին տակաւ և Հայք , մինչև հաղի-
տուն ինչ թէ զիպիցի այժմանդանօր .
եկեղեցեացն կանգնելոց 'ի նոցանէ և
նուիրելոց 'ի պաշտօն Աստուծոյ ' խոնար-
հեալ յաւերակս և 'ի բոյնս բուռց և
աղանեաց :

Ի Մագրաս , ուր երբեմն յաճախաւոր
բնակութիւն նոցա կազմէր ժողովուրդ
պատկառելի , մեծապատիւ և ընչաւէտ ,
գտան խուն մի բարեբաստագոյնք : Ի
վերջ կոյս դարուն յետնոյ և 'ի մուտս
այսորիկ , ապարանք նոցա պայծառա-
գոյնք էին քան զամենեցուն 'ի քաղաքին .
և բազմազուարճամարանոց նոցին , ուր
մեկնէին երեկորին յետ աւուրն վաս-
տակոց , յարդարեալք ամենայն սփո-
փանօք և պերճանօք : Գեր 'ի վերոյ հա-
նուրց փայլէին յայնժամ ազգատոհմք
երկու անդանօր մեծութեամբ ընչից ,
պատկառելի զօրութեամբ և երևելի
հանդերձանօք , որով վարէին զկեն-
ցադ : Հարք տոհմիցս այսոցիկ եղեն Սլա-
ճամիր և Սամաէլ Մուրադեան . Սա-
մուէլս այս կեայ տակաւին , և կեցցէ
յամայր 'ի միտս Հայոց ոչ միայն յԱ-
րևելս , այլ ընդ ամենայն երկիր : Կոտ-
կազրեալ նորա 'ի դաստիարակու-
թիւն մանկուոյ ազգին իւրոյ զհռութիս

վաթսուն բիւրուց , յանձն արար զհոգ-
հրիտակին յուխտ Մխիթարայ , որ 'ի
վենետիկ , բանալ վարժարան մանկանց
անփարթամ Հայոց : Բացաւ վարժա-
րանս 'ի Փարիզ , ուր յամաց հետէ կըր-
թին ընտիր կարգաւ հայ պատանիք ,
յորոց յոգունք ելանն ամի ամի ծա-
ւալել զնսեհ դաստիարակութեան և
բարգաւաճութեան յազգի իւրեանց 'ի
մարգս հայաստան և տաճկաստան աշ-
խարհաց : Վարժարանս այս Մուրա-
դեան 'ի սկզբանէ հետէ վայելեաց 'ի
չնորհս և 'ի խնամս ինքնակալին Գալ-
լիացւոց , որոյ հրամանաւ արքունին
տեսուչ դաստիարակութեան հաղոր-
դէր հանդիսի տարևոր քննութեան ա-
շակերտաց նորին : Հայք 'ի Մագրաս
ոչ վերջացան յաւուրս փառաց իւրեանց
'ի բարեմասնութեանց դաստիարակու-
թեան և դիտութեան , այն ինչ դուն
ուրեք խորհէր որ 'ի դաստիարակու-
թիւն 'ի Հնդիկս : Բացին կրթարանս և
տպարանս , և 'ի լոյս ածին գիրս և լրա-
գիրս 'ի շահ գաւառակցաց : Այլ , ա-
ւաղ , անց և այս ամենայն . ժողովուրդն
այն , որ երբեմն բազմաթիւ , բազմազօր
և բազմագանձ ճոխանայր , ընծայէ
այժմ 'ի տեսիլ եղերական քանի մի գեր-
դաստանս չքաւորս տաժեալս 'ի գո-
յից , զոր բարերարք ոմանք 'ի Հայոց
թողին 'ի դարման տնանկաց . և որ
այժմ 'ի ձեռս է աւանդապահաց եկե-
ղեցւոյն : Իսկ որք էինն 'ի Բումբայ , վի-
ճակեցան և նորա նմանավիշտ բախ-
տի : Էր երբեմն զի բնականայր անդ ժո-
ղովուրդ բազմաւոր , գոյաւոր և բարե-
բաստիկ , այլ այժմ դուն ուրեք թէ կայ-
ցէ տոհմին 'ի լիութեան կամ 'ի բաւա-
կանութեան , թէպէտ և պահի տակաւին
քահանայ 'ի սպաս հոգևոր պիտոյից ,
որոց անդն կան : Է և այլ քաղաքիկ , ուր
նախ քան զպարտութիւն Բենգալայ
յԱնգլիացւոց ' պատառէին Հայք 'ի վա-
ճառաշահութիւն մեծատարած : Ի
Չիւրա առ Հուգլեաւ բնակէր երբեմն
հատուած հոլանդացի վաճառակա-
նաց , և անդ ոչ սակաւ Հայոց թուի
լեալ զամս իբր երկերիւր : Եկեղեցի

նոցա կառուցեալ անդ յամի 1695 , ե-
րիցագոյն է տաճարաց քրիստոնէից 'ի
Հնդիկս բաց 'ի հռովմէական եկեղե-
ցւոյն 'ի Բանդէլ . և կայ տակաւին ան-
խարխար : Այլ ամայացաւ և Չիւրա ,
անհետացան Հոլանդացիք , անհետ ե-
ղեն և Հայք բաց 'ի ծերունեաց ոմանց ,
որ դեռ դեգերին անդր մեկուսի իբր 'ի
ձգել զստուեր ժողովրդեան երբեմն
բարեբաստի :

Առից արդ ասել ինչ և գիտքա քա-
ղաքէ մերմէ , որ մերթ հռչակագոյն
վաճառանոցն էր արևելեան Բենգալայ ,
ուր վաղ ուրեմն բնակութիւն արա-
րեալ Հայոց , կալան բաց 'ի բազմա-
տարած վաճառականութենէ իւրեանց
և զկալուածս մեծամեծս : Այժմ , որպէս
մարթի ինձ թուել , գոն աստ իբր 107
Հայք , յորոց 36 արք են , 23 կանայք և
18 մանկունք . և 'ի նոսա

1. Քահանայ
5. Տեաք կալուածոց
3. Վաճառականք
1. Իրաւագէտ
5. Կրպակաւորք
7. Օժանդակք
4. Արքունի պաշտօնեայք :

Եկեղեցի նոցա կառուցաւ անդ յամի
1781 , հանգանակաւ 'ի Միքայելէ
Սարգսեան , յԱստուածատրոյ Գէոր-
գեան , 'ի Խաչկայ Պետրոսեան , 'ի Մար-
գարայ Պողոսեան և յայլոց ևս , որոց
անծանօթ են անուանք , 'ի նմին վայ-
րի , ուր Խաչիկ Մինասեան ետ 'ի կա-
ռոյցս նորին կանգնել տնակ յառաջա-
գոյն 'ի հասարակաց աղօթարան : Սա-
կայն հատուած Հայոց 'ի մարդի աստ
Բենգալայ երիցագոյն յոյժ գտանի ժա-
մանակաւ , զի զչիրմաւ Աւետիսի ու-
րումն հայ վաճառականի 'ի Տեղոնդ
գոյ արձանագիր , որ բերէ զթուական
5 Օգոստոսի , 1714 :

Ամենայն ուրեք 'ի Հնդիկս , ուր ե-
ղեն Հայք , բարգաւաճեալ առ ժամա-
նակ մի , և խրթնացան տակաւ և կամ
բարձան 'ի միջոյ : Ի կալկաթա միայն
թուի աճել նոցա բարեբաստագոյն , 'ի
հաստի կացեալ մինչև ցարդ : Ըստ աշ-

խարհագրին, որ արարաւ յամի 1866, թուեցան բնակիչք՝ ըստ 377,924, յորոյ 703 Հայք էին: Այս թիւ, եթէ ոչ խաբիմ, մօտ զոյ՝ ի ճշմարտութիւն. և թերեւս կէս ի կէս նուազ էին Հայք յառաջ քան զամս եօթնասուն կամ ութսուն: Բնակութեան են Հայք, ի բազմանալ ուրեք բնակութեան իւրեանց, նախկին հոգ տանել ի կանգնել զտաճար ուրոյն ի պաշտօն և ի պահ կրօնից նախահարց իւրեանց: Այս բնակութիւն նոցա ազգային ի յայտ եկն ակներև ի Հնդկիս: որում վկայեն եկեղեցիք նոցա, որ կան տակաւին, ի Սուրբա, ի Բոմբայ ի Չիչրա, ի Դաքա, ի Մադրաս և ի Կալկաթա: Կանխեցի ասել թէ բաց ի միոյ՝ վաղեմի քան զամենայն եկեղեցիս է Հայոցն ի Չիչրա: ցետ նորա հռչակաւոր է հնութեամբ եկեղեցի նոցա ի Կալկաթա, կառուցեալ յամի 1724 ի նազարէթայ ումնէ, յորմէ և կալաւ զիշումն: այլ զնազարէթայ չիք ինչ ուրեք յիշատակեալ յառաջագոյն: Ապա յամի 1734 յաւելան դմբէթ և զանգատուն եկեղեցոյն. այլ յումմէ կամ դր ծախսեք ոչ է զիտելի: ցետոյ ուրեմն, յամի իբր 1780, ականաւոր ոմն ի Ժողովրդենէ անտի խաչիկ Առաքելեան, ետ արկանել շուրջ զեկեղեցեան պարիսպ հաստակաւոյց, և ի բակի անդ զվանս երիցանց, ածեալ յերկրէ Անգլիացոց ի պարգև եկեղեցոյն և զժամահար յարգուն, որ իբր զարու ի վերայ անցեալ, տակաւին յաղնուագունիցն համարի է ի քաղաքին: ցանուանել իմ զխաչիկ Առաքելեան, յուշ լինի ինձ հանդէս տիրասիրութեան նորա առ արքայ և առ պետութիւն Բրիտանացոց, ընդ որով կեցին ի խաղաղութեան և ի բարօրութեան Հայք ի Հնդկիս: Խմբագիր կալկաթեան լրագրաց, յերկրորդում հատորի որ ի տիպ հարաւ յամի 1865 հրամանաւ տեսչութեան Հնդկաց, տայ յէջ 220 զնկարագիր մեծապայծառ խրախուսեանց և տօնից, որ խմբեցան ի Կալկաթա յամի 1789 յամենան յու-

լիսի, իբրեւ եհաս անդր զորոյց բժշկութեան արքային Գէորգայ երրորդի ի չարաբաստ ակտէն: ի պատմութիւն արկեալ պատմաբանին զխրախուսութիւնս տեսչութեան աշխարհին և զամենայն դասուց բնակչաց ի վերայ ածէ:

« Ոչ մարթի մեղ ի խրախուսնս տօնից երեքշաբաթի զանց առնել զառաւորութեամբ տիկնոյ ուրումն ի մերոց աստի բնակաց, որ պարգևեաց հռչակիս հազար՝ բաշխել ի պարտապանս որպէս զիարդ և ի դէպ թուիցի կացելոց ի տեսուչս բաշխից:

Միւս ևս չնորհ առատութեան ի տեսիլ ածաւ ի խաչիկ Առաքելեան ի մեծափարթամ հայ վաճառականէ և ի վաղնշուց քաղաքակցէ մերմէ, որ իւրովն դանձու արձակեաց ի կալանաց զամենայն պարտապանս, որոց վեշտասան էր թիւ: ցայս առատութիւն, որպէս ծանեալքս, ծախեաց նա հռչակիս հազարաց երկու: Սա և այլք յորոնք ի Հայոց լուսազարդեցին զտունս իւրեանց և զեկեղեցի պայծառագեղ ջահիւք և լապտերօք: »

ցայտ է առ Հայս զի խաչիկ Առաքելեան առ տիրասիրութեան իւրոյ և առ այլոց ևս հանդիսից մեծախոհութեան, որոց կորեան յիշատակք, մեծարեցաւ յարքայէ, ի Գէորգայ երրորդէ, որ հաճեցան տալ նմա ի պարգևի մասին զկենդանագիր իւր մանրանկար և զսուսեր մեծագին. զորս թէպէտ ըստ ձախողակ բախտի ոչ եհաս նմա ընդունել, կարճեալ նորա ի կենաց, այլ ամենիշխան նախարար այնր ժամանակի դահակալն Գորնվալտայ, մատոյց ապա որդւոյ նորին երիցուն Մովսեսի Առաքելեան: Պատկերս այս և սուսեր կացին մնացին յազգատոհմին իբր աւանդք ժառանգութեան: ի խելամբութիւն բնակութեան առնա մեծի, և մեծարանաց զոր առնէր նմա տեսչութիւն աշխարհին և բոլոր իսկ դաս Ժողովրդոց, հարկ է հանել զհատուած ինչ յուզարկաւոր ի նմին հատորոյ խմբագրի կալկաթեան լրագրոց, զորմէ բանք եղեն վերագոյն:

29 Յուլիս 1790.

« Յաւուր կիրակէի յառաւօտու 25 սորին կնքեաց զկեանս իւր այնն արգոյ և աւագամեծար Խաչիկ Առաքելեան վաճառապետ հայ ականաւոր ի Կալկաթա և զլուս և զահեքէց Հայոց ի Բենգալ:

Բարութիւն, բարերարութիւն և զըթասիրութիւն առ մարդիկ, առատամտութիւն յամենայն հանգանակս բարեկենդանութեան հասարակաց, բարեհամբոյր լաւութիւն առ ամենսին, այս էին բարացուցականք նորա բարեմասնութիւնք: Այնպիսեալ ջերմ և չնորհալալու սիրով կապեալ էր նորա ընդ ազգին Անգլիացոց, մինչև յար ամենալուր խոստովանել նմա զանձն երջանիկ ընդ վիճակի իւր զբնակութիւն ընդ նոցին տեսչութեամբ: Մեծարոյ եղև նա բոլորում իսկ գաղթականիս անստղիւտ ամենեկին ի մարդկան մախանաց: ի սիրելի ազգի իւրում ի Հայս համարէր նա որպէս առաջնորդ և իրաւարար ամենայն վիճից նոցա և զբժտութեանց, զոր հատանէր միշտ հայրաբար:

Գոհութիւն մտաց և երկիւղածութիւն, այսոքիկ միայն վարէին զայրս առաքինասէր յողորմածութիւն և ի բարերարութիւն, անշաղախ ի պարծանաց և ի պերճանաց:

Եթող անմխիթար զայրի իւր և զորդիւ եօթն, զորս կաթողին սիրէր: Զմահ նորա ողբացին ոչ միայն Հայք, այլ ամենայն ազգինք, և ազգի ազգի աղանդք ի Բենգալ, ևս առաւել Յոյնք, սրոց ձեռն տայր յոյժ: Համայն ասել, ոչ ոք մեռաւ ուրեք առաւել աշխարհազոյժ աւաղեալ, կամ որոյ երկարագոյն և անկեղծագոյն լինիցին երբէք մահուն աւաղանք: ցայս այր բարի մարթի, առանց կամակորելոյ իւր զճմարտութիւն, հանել զբնակութիւն ի Սուրբ Գրոց ընծայեալ Յովբայ, (Գլխ. 29). —

« Աչք էի կուրաց և ոտք կաղաց, հայր էի ես տկարաց:

Դատաստան զոր ոչ գիտէի, քննէի: Զարդարութիւն զգեցեալ էի և արկեալ զիրաւունս հանգոյն կրկնոցի:

Ասէի, թերեւս հասակ իմ ծերասցի, և իբրեւ զծառ արմաւոյ բազում ժամանակս կեցից: »

Խաչիկ Առաքելեան ծնաւ ի վերին Հայս, և մեռաւ ամաց քառասուն և ութից. տոհմիկ էր և սերեալ ի Խաչեայ փանուսայ Գալանթարէ, որ իբր յառաջ քան զգար հռչակեցաւ նախանձու և զօդիւ սիրոյ Անգլիացոց, որոց ընկերութիւն արեւելեան Հնդկաց համագեալ ի գնացից նորա և ի մարթանաց, մատոյց Հայոց ազգի ազգի յառաջաբաժինս ի տուրևառիկ շահաւետութիւն նոցա ի Հնդկիս:

Թաղեցաւ նա յաւուր կիրակէի ընդ տաճերորդ և ընդ մետասաներորդ ժամս առաւօտին յեկեղեցւոյ, յետ կատարելոյ սրբոյ պատարագին: ի յուզարկաւորութիւն նորա խոնէր որեար անթիւ և երևելի. քահանայապետն Հայոց ընդ կղերցն դասու, զօրապետն փոլարտոն, կրկին թիկնապահք ամէն իշխան նախարարին, և այլ ևս բազում աւագանի և զօրաղխեան: »

Այսպիսի վկայութիւն դնեն առաքինութեանց հոյակապ առնս այսորիկ ոչ նորին համազգէք, այլ Անգլիացէք: ցղել ամէնիշխան նախարարին զթիկնապահս իւր ի յուզարկաւորութիւն տարաշխարհիկ օտարականի՝ յայտ առնէ զչափ մեծարանաց գնացելոյն: Իսկ ազգ նորա պատիւ արարեալ նմա, ամփոփեաց զնա ի ներքս յեկեղեցւոյ, փոխանալ ամփոփելոյ ըստ սովորութեան ի բակին:

Ժամանակակից եկաց նմա միւս ոմն հայ անուանի Սարգիս Տէր Յովհաննիսեան Սարգսեան, որոյ ոչինչ ընդհատ բարեպատիւ լեալ ի քաղաքին, մեռանէր յետ ամաց լի աւուրբք և փառք, թողեալ զբազմաթիւ ընտանիս և զճոխութիւն իշխանական: Այլ բազումայն է՝ զի անկայուն է յաշուրաւ և սերնդոց երկաքանչիւրոց թէպէտ և զփորձ առեալ յեղման բախտի, բայց

կալան միշտ զգատիւ իւրեանց և 'ի կարիս :

Մենայր Հայոց 'ի կալկաթա գեռուս գմիւս ևս աշխարել զմահ մեծապատիւ առն բարւոյ 'ի ժողովրդեանէն, զՅովհանն ջանայ էլիասեան ասեմ՝ զճոխ տեսնէ կալուածոց 'ի Բենգալ: Սերեալ նորա 'ի նշանաւոր նախնեաց, յանձին երբ զամենայն առաքինութիւնս, որ նիւթն առաքինոյն զգարմանս և զակնաժութիւն աշխարհի: Բստ քաղցրահամ բոյր բարուց իւրոց գնայր նա ընդ ամենեսին հեզութեամբ և ցածութեամբ, որ անպատիր տիպքն են անկեղծ կրօնասիրի: Բարեպաշտութիւն նորա անպարծ և ողորմածութիւն անպարագիր, կամ բստ բանից քերթողին:

« Բարեբարէր անբերան,
Շառագունեալ ընդ համբաւ »:

Ի դարման կարեաց և կրօնից և ուսմանց բաշխէր արքայօրէն գանձ առատաձիր, զոր առ յաճախութեան գործէ 'ի պատմութիւն արկանել: Արձանագիրք 'ի յիշատակ նորա դրոյմեալ յորմս եկեղեցւոյն Հայոց և բժշկարանի հիւանդանոցին կալկաթայ, շնորհակալեօք վկայեն ազնուագութ առատութեան նորա և բարեկրօն լաւութեանց: Ի մահու նորա կորուսին գաւառային և այլ կաճառք խնամակարօք եղկեղեաց զբարեկամ առատ և զհօր ձեռնկալու: Ո՛տայր տոհմի նորա զհետ երթալ չքանալ օրինակին:

Մի լիցի ինձ լռել զանուն այլոյ ուրումն յունեւոր վաճառականաց մերոց 'ի Հնդկիս, զՅարութիւնի Աբգարեան զհեղինակի համանուն վաճառատան: Մեկնեալ նորա 'ի բնիկ երկրէն 'ի Պարսից 'ի տիս տղայութեան, եհաս տառապանօք 'ի Բոմբայ. և բնակութիւն կալեալ անդանօր, ձեռն էարկ 'ի շահաւաճառ գուղնաբեայ. և ապա օգնեալ 'ի բախտէ մեծանայր ընչիւք: Ելեալ ապա անտի 'ի կալկաթա, երաց անդ զվաճառատուն Աբգարեան ընկերաց, զմանօթն ամենեցուն և զանկարօտ ընծայութեան: Եդ նա զգլորոց 'ի Զուլա 'ի Պարսս. և ձեռնտու լեալ յորովից

'ի համազանց իւրոց, կատարէր զկեանս ամաց 85, յամի 1863 'ի 16 աւուր ամսեան մայիսի: Տես ինձ զի նախ քան զամս ինչ, նախկին հայ ոստիկան ատենի Անգլիացւոց՝ եկաց 'ի կալկաթա ոմն 'ի տանէ աստի (1), որ 'ի ձեռն ամենիշխան նախարարին Հնդկաց ընկալաւ յարքայէն Պարսից գնչան Շիդօխօդ շիդ պատուոյ: Հայք 'ի Հնդկիս ոչ վերջացան 'ի փութոյ դաստիարակութեան. և չե Անգլիացւոց ոստանկաց կամ սոսկականաց յայտնեալ զտենչ և կամ տնօրինեալ զՀայկաթայթանս արկանելոյ 'ի բնիկ երկրին զլոյս գիտութեան, վաղու ևս հնարէին նոքա դնել վարժեար, և բստ ներել ժամանակին, դաստիարակեալ զմանկտին, կրթել զնոսա 'ի կրօնս նախահարց: Իբր 'ի մուտս դարուս երաց 'ի կալկաթա զառաջին վարժոց Հայոց Յարութիւն Գալուցեան, գաւառաւ հայեցի. և թէպէտ վարժիցն 'ի զուգակշիռ ածեալ ընդ արդի հրահանգաց չէին ինչ վնձ, բայց ընտին զպէտս այնց աւուրց, զրդեալ զՀայս և 'ի ջանասիրութիւն դպրութեան: Ապա յետ ամաց եթող Ս. Մուրատխան, 'ի կազմել զդպրոց Հայոց 'ի կալկաթա, հռուսիս ութ հազար, յոր գումարեալ և ժողովրդեանն հանգանակաց, հիմն եղաւ նովաւ Հայկեան Մարդասիրական ճեմարանին, բացելոյ յամի 1821, յերկրորդում աւուր ապրիլի: Յայս ճեմարան խառնեցաւ ընդ հուպ դպրոց Գալուցայ. այլ արժան է յամել 'ի խօսս ինչ զայսմանէ: Պարագայց ամօք 'ի ճեմարանի և եթ աստ եղև ընդունել յօգունց թէ արդեօք և հանուրց 'ի հայ մանկըտւոյն զգաստիարակութիւն: Չէր ինչ նա ընդհատ 'ի վարժարանաց Անգլիացւոց, որ էինն յայնժամ 'ի կալկաթա. այլ յառաջ քան զամս քսան սկըսաւ խրթնանալ առ վնասու ցանկութեան նախամեծար առնելոյ ծնողաց զվարժեարս Անգլիացւոց քան զբուն աղբին, մինչև ուր ուրեմն չմնալ 'ի նմա

1 Սէթ Յ. Աբգարեան որդի Յարութիւնի Աբգարեան:

բայց ամիոյ միոյ ձրի աշակերտաց. թէպէտ և մարթէր պարծել նմա յանշարժուն կալուածս իւր և 'ի շարժուն իրս ունել զտարնոր հասո ոչինչ նուազ քան զհռուսիս բիւր: Թէ չարեացապարտ վայրաբերութեան նորա կացին անհոգութիւն և անզգաստութիւն կաճառորդաց նորա և ժողովրդոց, չիք երկբայել: Սակայն քաղցր է նկատել, զի յամաց ինչ հետէ պայծառանան տակաւ ակնկալիք նորին, և զիւրաւ բնակին և դաստիարակին անդ այժմիկ մանկունք Հայոց իբր քառասուն: Քաղցր ևս է իրադեկ լինել զի 'ի վերջում նախաշաւիղ քննութեան 'ի մուտս համալսարանին կալկաթայ, ոչ ինչ անհաւասար եկաց 'ի կշիռ ընդ այլոց յանգլիացի և 'ի հնդկի դպրոցաց, երկից 'ի վեց աշակերտաց նորա անցեալ քաջիկ ընդ փորձ հանդիսին, երկուցն յառաջնում դասու և միում՝ յերկրորդում անդ: Այս ելք աղղէ դոյս վերակենցաղելոյ ճեմարանին: Ոչ այլ ինչ խնդրի առ 'ի յարդարել զնա նախապատիւ, բայց հոգ հանապազօր և օգնականութիւն հասարակաց:

Եւ իբր իցէ հրաժարել 'ի ճեմարանէս, մինչև տուեալ զանուն այնր վաստակաւորի, որ զամս իբր քառասուն վարժապետ եկաց անդր և ապա տեսուչ, այն է զմեծայիշատակ Յովհաննիսի Ավդալեան. որում՝ շնորհապարտ յոյժ գտանին և ճեմարանն և օգնականք նորա ընդ ինքնանուէր վաստակոցն և անմեղկելի ճգանց 'ի յորդոր դաստիարակութեան Հայոց 'ի Հնդկիս: Յովհաննէս Ավդալեան մեկնեալ 'ի տղայ տիս 'ի բնիկ երկրէն 'ի Շիրազայ Պարսից, եկն 'ի Հնդկիս յառաջ ևս քան զկէս դարու. և վառեալ 'ի խանդօ բանասիրութեան, հանէր զտիւ և զգիշեր 'ի հմուտութիւն հայրենի և անգլիացի բարբառոց, ոչ ապախտ արարեալ և զհեղինաւն և զլատինաւ. և անխոնջ տքնութեամբ արար իւր անուն 'ի դպրութեան: Ծանօթ էր նա յորդունց 'ի բանիւրուն և 'ի մեծանուն որերոյ 'ի Հընդիկս և յԵւրոպա, յորոց ընդ յորովա

գունից, նա աւանիկ ընդ որոց անուանիքն էին 'ի բանասիրութեան արևելեան լեզուաց, յաճախէր 'ի տուրևառ նամականոյ: Եղև նմա նսեհ բարեկամելոյ ընդ բարեյիշատակ Յակովբայ, և ընդ այլոց 'ի մեծահանճար և 'ի գերակայ նմանեաց: Յօդացեալ նորա զամս իբր յիսուն Ասիական կաճառոյն Բենգալայ, ուղերձեաց դահերիցու նորա և յօդից յամի 1827 զերեսայրիս գրաւոր երկոց իւրոց զանգլիացի թարգմանութիւն պատմութեան Հայոց զՉամչեան վարդապետի. և ապա եդ հայերէն և այլ բազում գիրս: Ի կալ նորա վարժապետ 'ի ճեմարանին, բաժանէր զպարագ իւր ընդ վարժս դպրութեան և ընդ կրթութիւն ընտանեաց: Այլ վաստակոց առն այսպիսոյ, աւաղ, դուն ուրեք ընծայի 'ի ժամանակաց արժանին պատիւ, և Յովհաննէս Ավդալեան ոչ գիպաւ արտուղութեան 'ի կանոնէդ: Մահ նորա յայնցելումն ամի փետեկեաց 'ի ժողովրդեան Հայոց վիհ անդնդախոր, զոր չէ դիւրին կարկատել: Այլ արժան է յուսալ, թէ տակաւին իրաւ արասցէ յիշատակի նորա աղբ նորին:

Սակայն 'ի հռչակ համբաւոյ բանասիրութեան անցոյց զնովաւ Մեսրոպ Դաւթեան, այլազգ ևս թաղիադեան կոչեցեալ (1), մտախոհ և բանագիրնչա.

1 Ներեցէ արգոյ պատմագիրս ոչ գալ ինձ 'ի կարծիս իւր զերեւմտ ականաւորաց երկուց 'ի հայ դպրութեան 'ի Հնդկիս, զի որ անդստին յամի 1847 միչ 'ի 1852 աշակերտեցայ Յովհաննիսի Ավդալեան 'ի Մարգասիրական ճեմարանի 'ի կալկաթա, պատահեալ անդ ստէպ և Մեսրոպայ Դաւթեան, 'ի մօտոյ ծանեայ գերկաքանչիւրն: Յովհաննէս Ավդալեան էր հանճար ինքնարար և գիշերաշան տքնութեան ձիր: Անցեալ նորա ընդ գիրս անթիւս, և զօրավիգն առեալ զվիշողականին իւրոյ զիւրով սքանչելի, մեթերեաց յանձին հմուտութիւն անբաւ, մինչև յերաւի լինել նմա կենդանի դիւան մատենից: Ել նա 'ի կատար անդր ծառոյ անգլիական բարբառոյն, մինչև ոչ միայն սխրանալ Անգլիացւոց ընդ այն, այլ և 'ի պատուի ունել զնա գիտնոց իսկ նոցին:

Իսկ Մեսրոպ Դաւթեան որ ինչ բերէրն, ընկալաւ 'ի բնութեանէ: Ուսեալ էր նա 'ի Հայաստան հայերէն, ուսաւ և անգլիերէն 'ի Հնդկիս: Սա եռանդնոս էր և յար 'ի շարժման. իսկ նա

նաւոր, ելեալ յԱրարատայ յերկրէ ծը-
նընդեան իւրոյ յամի 1821 ընդ Եփրե-
մայ հայրապետի, իբրեւ մեկնէր սա-
ընդ եպիսկոպոսաց իւրոց և երիցանց
ի սահմանս Ռուսաց, խուսելի հարըս-
տահարութենէ իշխանութեան Մահ-
մետականաց: Եմուտ Մեսրոպի ի վար-
դապետարան Սնգլիացոց ի կալկա-
թա, ուր զգործը եկեալ առ ժամանակ
մի, արար ընդ այլ ի հայ մատենից
իւրոց և զվէպ վարուց Հիբերայ բազ-
մահմուտ վարդապետի, որում ծանօթ
իսկ էր. և նուիրեաց զՊաղեստին Հի-
բերայ մեծահոգակ հանեալ ի հայ:

Յամի 1844 զայն առաջին նուագ
յղեցան ի Հայոց մանկունք երկու ի
կալկաթայ քաղաքէ յԱնգլիա ի դաս-
տիարակութիւն: Ապա յետ ամաց եր-
կուց նախակրթեալ միւս այլ մանկան
ի վարժարանի Լամարտիներայ, և տա-
րեալ անոր զմրցանակն ոսկի, անց
գնաց և նա ի Լոնդոն ի կատարել ըզ-
կրթութիւն իւր: Առեալ նորա անյա-
պաղ զկարգ ատենական ի համալսա-
րանին քամբրիջայ, ել ի բարձ իրաւա-
գիտութեան. և զարձ արարեալ յառաջ
քան զամս իբր հնգետասան ի կալկա-
թա, ձեռն էարկ ի պաշտօն օրինաց ի
գերագոյն ատենի Սնգլիացոց: Վեհա-
գունի վիճակեալ նորա հանճարոյ, և
հեղեղաստատ հոտանաց պերճախօսու-
թեան, ընդ որ միալուծ կցորդեալ զլան
և զժրութիւն, արար իւր փառս յաս-
պարիսի անդ իրաւագիտութեան: Եթէ
յառաջ քան զամս միայն երեսուն ա-
սէր որ ի Հայոց անցանել երբեմն ու-
մեմն ի ժողովրդեանն ի բազմոց գերա-
գոյն ատենի Սնգլիացոց, առ պա-
ռանցեալս համարէր: Վերբերութիւն
Պօղայ ի մեծափառ բարձ ատենակալի,
բանայ նմա զբազմափայլ հանդեր-
ձեալս: Արժան է յիշատակել զի ընդ
կարգել Պօղայ յատենակալ և ընդ նախ-
կին բազմել նորա ի դատ եղեռանց,

հանգարտ և ի խորհուրդս մանականք քան ի
խօսս համակէտ: Այս խորբ բարուց և ախոր-
ժակաց ի վեր երևին և ի գրոց երկաթանջե-
րոցն:

ոստիկան էր ատենի ի կալկաթա, և
ըստ պատշաճի կարգին բարձակից ի
գատաստանս՝ միւս ոմն հայ ընչեղ և
արգոյ, սերեալ ի բարեխիշտակ Ա.
Գէորգայ ի միոյ ի նոցանէ, որ կառու-
ցին զեկեղեցին ի Գաբա:

Իրաւագիտութեան թուի ցայս վայր
ի Հնդկիս յաճախագոյն ձգեալ զուշ
պատանեաց Հայոց. զի զմտաւ ածեալ
զթիւ նոցա սակաւ ի կալկաթա և յայլ
և այլ գաւառս աշխարհին, բազումը
են ի նոսա իրաւագէտք: Յետ մեծա-
համբաւ ճարտասանին Պօղայ, որ նախ-
կին ի Հայկազունս կալաւ զատենական
կարգ Սնգլիացոց, յարեցան յօրէնս և
այլը ոմանք ոչ ինչ նուազ քան զուրթ.
յորոց մին այժմ է գատաւոր ի Գեհնի,
այլոցն զբաղեալ յայլ և այլ գատարանս
ընդ բնաւ Հնդկիս. այն ինչ ահա հան-
դերձին յԱնգլիա այլ ևս բազում պա-
տանիք դառնալ այսր ընդ հուպ և յաւե-
լուլ ի թիւ համաշխարհիկ իրաւագի-
տաց: Այլ բաց յորոց դատաստան լի-
նին հրապարակաւ, կան և յօգունք յազ-
գի ազգի կարգս դատաստանականին,
է որ ի ջատագովութիւն գատից մա-
նունց, և է որ յառաջնորդութիւն իրա-
ւանց, և շատք ևս այնորիկ են, որոց
երբէք երբէք անցեալ քալիկ ընդ կա-
րեոր քննութիւնս զրոշմեցան ի գիրս
գիւտանց. և աւուր աւուր յամենայն
ատենան ելեւելս առնեն զանգլիացի և
զհնդիկ համարուեստիք: Յախորժա-
կայ անձանց թէ արդեօք ի յուսոյ շա-
հուց ածան Հայք իրաւագիտութիւն,
ոչ է աստ հետադօտել. այլ զիտելի լի-
ցի, զի շատ իսկ ցուցին ցայսվայր զա-
ջողութիւն մտաց, որով կարացին կալ
յակաստանի ընդդէմ ոսոխաց, և խրա-
խուսեցին նկրտել մոռագիւր ի հան-
դերձեալս:

Բժշկականին իսկ ուշ եղաւ անգստին
ի քսան ամաց հետէ և այսր: Են մեր
այժմիկ չորք բժիշկք վիրաց և պաշտօ-
նեայք բժշկաց զրեալք ի սպաս արքու-
նի, և պաշտօնէից նոցա դարձեալ սա-
տարք երկու արձակք ի նմին սպասու,
որոց ամենեցուն անթերի լցեալ ըզ-

պարտս, բարենշանք արձանանան ի
բժշկականութեան:

Պատրաստին ահա և ոմանք յԱնգլիա
մրցել ի մօտալուտ քննութիւնս անդ-
սահմանեալս ի մուտս արքունի սպա-
սու, և կէսք դարձեալ կրթին ի բժշ-
կական վարժարանին կալկաթայ: Են և
երկու կամ երեք ոմանք, որ կալան զա-
րուեստ գործիական և ի գէպ իսկ է
այլոց կրթել զհետ նոցա մեծայոյս: Հե-
րուն յաջողեալ առաջնոյն ի Հայոց
Հնդկաց աշակերտի ուրումն Գովթեան
վարժարանին կալկաթայ ի մրցանս
տարեւոր քննութեան ի Լոնդոն, էանց
ի սպաս տեսչութեան Հնդկաց. և չիք
երկմտել թէ յօգունք յայսմ հետէ կա-
միցին մտանել ի նոյն գործ արքունի,
որպէս թուի ահա հանդերձել երեւել
ոմանց և ի մօտալուտ քննութեան:

Համայն յուշ լիցի, զի այս քսան և
հինգ եւթ ամք են զի սկսան ի Հնդկիս
Հայք ըստ պատշաճի դաստիարակել
զմանկտին. և ամք տասն կամ երկուտա-
սան, յորմէ հետէ մանկունք նոցա, ուս-
տերք և դստերք, գնան գունդագունդ
յԱնգլիա ի դաստիարակութիւն: Ե-
ղեն իսկ զի յառաջ ժամանակաւ ելին
անոր մանկունք միայն երկու կամ ե-
րեք, յորոց յիշատակեցից զՅովսէփ Է-
մինեան, որ էլ անոր յամի 1751 և ի
զիր եհար յամի 1792 ի Լոնդոն զգէպս
կենաց իւրոց և որ ինչ անցին ընդ նա
ի մայրաքաղաքին: Էմին ինքնին զրեաց
անգլիներէն զկենցաղական իւր, որ յե-
րեւել իւրում գրաւեաց իմն զուշ հա-
սարակաց: Կեան տակաւին ազգականք
Էմինի ի կալկաթա, յուշի կալեալ ըզ-
պարառութիւն անցից նորին: Չասեմ
թէ արգասիք դաստիարակելոյ զման-
կտին ի բացական և ի բարդաւաճ եր-
կրին ետուն գոհութիւն հերիք, այլ և
զայն ժխտելոյ ունիմ եթէ եղև անտի
օգուտ, մինչև ի գէպ իսկ վարկանել
թէ զոյզն ինչաւելի հմուտութեամբ, և
խուս մի փոփոխութեամբ հնարից,
մարթի հանապազորդել փորձոյն և
տալ Հայոց յառաջ անցանել ի մա-
սունս բարոյականին և կենցաղակա-

նին: Սակայն օրէն է ակնարկել, ոչ
յոր ուրոյն հարկանեմ զբանս, զի
բազմածախութիւն փորձոյն ցայս վայր
կասեցոյց զյուլիս ի յղելոյ զմանկունս
յԱնգլիա. այլ ամենայն փորձք ի սկզբ-
բան մեծածախք են, կամ թէ բնաւ
իսկ ի գերեւ ելանեն. ժամանակաւ և
հմուտութեամբ միայն յաջողի բառեալ
զխոյ, և խոյս տալ ի վրիպանաց:

Բաց յորոց կալանն զայլ և այլ պաշ-
տամունս, պարտալին պէսպէս և այլք
բազումք, որ տեսարք են անդաստանաց,
որ վաճառականք, որ առդինք և որ
օժանդակք ի գործարանս պետութեան
և վաճառականաց: Յառաջ ժամանա-
կաւ պատաղէին ի վաճառս գողցես
ամենեքին, յորոց յուրվագունից տարա-
ծեալ զվաճառականութիւն իւրեանց,
առ վաճառապետս զրեցան ի մայրաքա-
ղաքս և ի քաղաքս ուր և բնակէին:
Այլ անտի և այսր ողորմագին այլա-
փոխեցան իրք, և որով իւրք և ա-
ռաւելուցուն այժմիկ պայմանք նոցա և
ակնկալիք, անշքացեալ են անշուշտ իբր
վաճառականք առ նախնեօք. և բաց ի
վաճառատանց երկուց կամ երից, հա-
զիւ ուրեք թէ իցէ վաճառական հայ
ըստ բուն մտաց ձայնին, հինաւուրց
հոչակաւորացն և յաջորդաց նոցա ըն-
կճեալ տակաւ ի ձախողակաց:

Հայք յետ բնակելոյ ի Հնդկիս՝ կալան
անդ ընդ պարագայս ամաց զարեւելան
ձև իւրեանց և զսովորոյթս. և կացին
մնացին իբր ժողովուրդ որիչ և անջատ.
խնամեցեալ միայն ընդ իրեարս, և ըստ
կարի խորշեալ ի կենակցութենէ օտա-
րաց, որոց յար պատահէին զգործոյ:
Ամենայն ուրեք չքեղ և խորշխորչան
պատմութեանք նոցա, մանաւանդ թէ
խտիրք ինչ արեւելեան գիմաց ի յայտ
ածէին գնոսս: Ընդ երկար զառաջս
կալեալ նոցա եկամուտ եւրոպական
սովորութեանց, խմբէին խրախամիտ
զտօնս ազգայինս և կրօնականս որպէս
նախահարք իւրեանց ի հայրենիս: Առ-
ջերմ և սեռն սիրոյ եկեղեցւոյ իւրեանց,
միոյ ի հնագունիցն յաշխարհիքրիտո-
նէից, հաւատային սերտիւ ի պատգամս

նորա և 'ի վարդապետութիւնս . հպա-
տակեալ համայն կարգաց նորին և ա-
րարողութեանց : Ոչ միայն կղերի նոցա,
այլ և աշխարհականացն դասուց փոյթ
էր իսկ և իսկ ընդդէմ կալ փորձոյ նորա-
ձեութեան և կամ սաղորանաց այլակրօ-
նից 'ի քեցեւ զնոսա յեկեղեցւոյն , թէ
և 'ի ինդիրս կրօնից չիք նոցա մտահա-
ճութիւն կամ նախանձ մոլեկան , մա-
նաւանդ թէ ազատամտագոյնք են քան
զոր 'ի նախկրօն վարուց նոցա մարթի
ակնկալել : Այլ ժամանակն , որ զհրաշս
առնէ , և բազում այն է զի տնօրինէ
զգերիվերոյս միահամուռ ճգանց հռչա-
կաւոր առաջնորդաց վերաստեղծու-
թեան ազգաց , զործեաց այլայլութիւնս
մեծամեծս 'ի միտս , 'ի սովորոյթս , 'ի
գնացս և 'ի կրօնս իսկ Հայոց 'ի Հնդիկս :
Աճեցին այլայլութիւնքս տակաւ . և
թուին աճել տակաւին : Չէր կարծել
թէ չմարթէր ազգել տակաւ 'ի նոսա
որ ինչ անցանէրն զնորօք և կամ հա-
մուղել նոցա 'ի յաճախութենէ հաղոր-
դակցութեան Անգլիացւոց և 'ի դպրու-
թենէ բարբառոյ նոցին : Սկիզբն փոփո-
խութեանս 'ի հանդերձից եղև , զոր
փոխանակեցին ընդ եւրոպականացն
զոր այժմ ագանին գրեթէ ամենեքին .
զի բաց 'ի քահանայէնոցա , զուն ուրեք
արկանէ որ զվաղեմի ձորձ իւր արևե-
լեան : Բնկալան ընդ զգետուն և զսո-
վորոյթս եւրոպական կենցաղի . և ընդ
ծաւալել դաստիարակութեան՝ առին և
զլեզու Անգլիացւոց : Խօսին գեռ հայե-
րէն ոմանք , մանաւանդ երիցագոյնք ,
այլ հագիւ իմանայ զայն բարբառ զար-
մըննորատունկ : Եւ ոչ այս միայն , այլ և
սուրեւառք ամուսնութեանց եղեն յու-
գունց ընդ Անգլիացիս 'ի Հնդիկս և
յԱնգլիա իսկ , և զլուխ ամենայնի՝ ան-
շատեալ տոհմից ոմանց յեկեղեցւոյ իւ-
րեանց , յարեցան 'ի նոցայն : Թէ այլա-
փոխութիւնքս այս տայցեն Հայոց 'ի

Հնդիկս քնաս թէ օգուտ , վիշտ եթէ
բարեբաստութիւն , ժամանակին է ըզ-
խնդիրն լուծանել : Այլ հայեցեալ 'ի
պայման նոցա այժմու , չիք յերկուա-
նալ , զի 'ի թափոյ ուստեք շարժու-
թեան թէ ոչ շրջիցին յետս կոյս , այլ
ևս ամբ ինչ , և վճարեալ է վաճն նոցա .
զի կորստեամբ հայրենի բարբառոյն
ուծացեալ նոցա համայն և 'ի կրօնից
իւրեանց , և զանդեալ ընդ եկս կամ
ընդ բնիկս եւրոպացիս , ճանաչիցին
թերեւս այնուհետև իբր ազգ ինչ օտա-
րախառն հանգոյն Եւրասեանց : Այլ
զիարդ ինչ և մնան նոցա ապագայք ,
եթէ բնաւ իսկ իղձ լինին յաջողել 'ի
պատերազմի կենաց , և ոչ վերջոտնել
յարշաւանին քան զայլազգի դրացիս ,
մի ակն կալցին առանց մեծաջան խնա-
մոց և երկայնամիտ պնդութեան և ա-
ռանց ընտիր դաստիարակութեան որ-
դուց կանգնել յաղթանակ . յուշ լիցի նո-
ցա զի յապախտ լինել ջանից , հասցէ
թշուառութիւն , որ մահադեղն է որոց
ոչն համահետ ընթանան ընդ հասա-
րակաց բարգաւաճանաց , և որոց բա-
ժին 'ի բացեայ 'ի մեծարանաց՝ եպե-
րանք են բնակցաց :

Եւ արդ , ընթերցասէրք , սովին վեր
'ի վերոյ գծագրաւ զրաւ առնեմ պատ-
մութեանս , զոր 'ի ստուարութիւն մա-
տենից մարթէր երկայնել . և հանգէտ
համառօտիւ ժտեմ զթողութիւն թերու-
թեանց որ սպրդին մերթ անխորչելի
'ի կերպարանս բանից ընդ հանել ու-
րուք զխորհուրդս իւր 'ի բարբառ օտա-
րին : Տեարք , որպէս զիարդ 'ի խամուց
ածի զգիրս 'ի գլուխ , և զոյժ թափեցի
ընդունելի յարդարել զայն , և թէպէտ
և պատահիցիմ իսկ զատաստանի ձե-
րում , ակն ունիմ զի մեղմով արասջիք
զայն այնմիկ , զոր յերկար ծաներուք
լինել 'ի Հայոց 'ի Հնդիկս :

2814

2010

